ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

17. 09. 2022 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 19-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարքային շրջանների անցկացման ընթացքի մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրման և հաստատման մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. Ֆակուլտետի կրթական ծրագրերի ղեկավարների հաստատման մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
4. Ընթացիկ հարցեր.

   4.1. Ֆակուլտետի ամբիոններում 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի առարկայական ծրագրերի և փաթեթների առկայության մասին:

   4.2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմի հաստատման մասին:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը նշեց, որ 2021-22 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարքային շրջանները կազմակերպվել և անցկացվում են ըստ հաստատված ժամանակացույցների, հանձնաժողովների հաստատված կազմերի անդամների մասնակցությամբ, դրանք դեռևս ընթացքի մեջ են և կտևեն մինչև ս.թ. սեպտեմբերի 22-ը (ներառյալ): Ի տարբերություն հեռակա ուսուցման համակարգի՝ առկա ուսուցման համակարգում 2-րդ լուծարքային շրջան հասել են քիչ թվով ուսանողներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը,

բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարքային շրջանների անցկացման ընթացքի մասին Կ.Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի մասին ևս զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի համաձայն՝ տրվող անվանական կրթաթոշակներին կարող են հավակնել 4 և ավել կիսամյակ անընդմեջ գերազանցություն ունեցող ուսանողները: Ըստ այդմ՝ զեկուցողը ներկայացրեց կրթաթոշակների հավակնորդների թեկնածությունները: Նշվեց, որ ըստ կրթական ծրագրերի հատկացված անվանական կրթաթոշակները ֆակուլտետում 4-ն են՝ «Մխիթար Գոշ» (Պատմություն), «Դավիթ Անհաղթ» («Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Հոգեբանություն»), «Գրիգոր Նարեկացի» («Հայոց լեզու և գրականություն»), «Շառլ Ազնավուր» («Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն»):

«Մխիթար Գոշ» անվանական կրթաթոշակի հավակնող ուսանող, ցավոք, չունենք, ուստի այդ կրթաթշակի տեղն այս կիսամյակում մնում է թափուր:

«Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի համար ներկայացվել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Տաթևիկ Վարուժանի Վասիլյանի թեկնածությունը, ով ունեցել է վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի համար առաջադրվել է «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Նարա Արմենի Մելքումյանի թեկնածությունը, ով ունեցել է հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի համար ներկայացվել է «Անգլերեն

լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Նելլի Գրիգորի Դավթյանի թեկնածությունը, ով ունեցել է վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

Նշված կրթաթոշակներից բացի՝ մասնաճյուղում առկա են նաև մրցութային կարգով տրվող 4 անվանական կրթաթոշակներ՝ «ԵՊՀ», «Իջևան», «Արտակ Ցուցուլյան», Արցախյան 44-օրյա պատերազմում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անմահացած ուսանողների և շրջանավարտների անվան կրթաթոշակ:

«ԵՊՀ» անվանական կրթաթոշակի համար Հումանիտար գիտությունների ֆակուլտետից ներկայացվում է «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Արթուրի Ստեփանյանի թեկնածությունը, ով ունեցել է հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Իջևան» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Անուշ Եսայիի Խաչատրյանի թեկնածությունը, ով ունեցել է հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլիա Արտավազդի Եղոյանի թեկնածությունը, ով ունեցել է չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

Արցախյան 44-օրյա պատերազմում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անմահացած ուսանողների և շրջանավարտների անվան կրթաթոշակի համար ֆակուլտետից ներկայացվում է «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Խաժակի Սարդարյանի թեկնածությունը, ով ունեցել է հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, պ.գ.թ., դոցենտ Ն.Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը: Ֆակուլտետի գիտխորհրդի անդամները հավանություն տվեցին առաջադրված թեկնածություններին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Առաջադրված ուսանողների թեկնածությունները ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի մասին զեկուցող Կ. Պողոսյանը, ներկայացնելով ֆակուլտետի կրթական ծրագրերի ղեկավարների անունները, նշեց, որ նախորդ տարվա համեմատությամբ կա մեկ փոփոխություն. «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ղեկավար Էմմա Թեմրազյանի փոխարեն առաջադրվել է Օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Գայանե Մուրադյանի թեկնածությունը:

Հարցի կապակցությամբ ֆակուլտետի գիտխորդի անդամների կողմից առարկություն չեղավ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ֆակուլտետի կրթական ծրագրերի ղեկավարներին:

ԼՍԵՑԻՆ.

Ընթացիկ 1-ին հարցի մասին զեկուցեցին ամբիոնի վարիչները: Նրանք նշեցին, որ ամբիոններում առարկայական փաթեթները հիմնականում առկա են: Ընթացքի մեջ են այն փաթեթները, որոնց ուսումնական պլաններում փոփոխություններ են տեղի ունեցել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ, դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը:

Ֆակուլտետի դեկան, գիտխորհրդի նախագահ Կ. Պողոսյանը ամբիոնների վարիչներին հանձնարարեց հետևողական լինել նոր ուսումնական կիսամյակի սկզբում ամբիոններում առարկայական բոլոր ծրագրերի և փաթեթների առկայությանը, դրանց թարմացմանը և մասնավորապես առաջին կուրսերում դասավանդվող դասընթացների փաթեթներում գնահատման նոր չափանիշների ներդրմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոններում առարկայական փաթեթների վիճակը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Ընթացիկ 2-րդ հարցի մասին զեկուցեց Կ. Պողոսյանը: Նա ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգի համաձայն թարմացված Հումանիտար գիտությունների ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմը, որում ընդգրկված են կրթական ծրագրերի ղեկավարները և որպես ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ՝ այն ամբիոնների վարիչները, ովքեր կրթական ծրագրերի ղեկավարներ չեն: Ֆակուլտետի գիտական խորհուրդն առաջարկեց Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ, դոցենտ Վ. Ավագյանի թեկնածությունն առաջադրել որպես ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի անդամ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Մ. Զուրաբյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, բ.գ.թ, դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմը և Վ. Ավագյանի թեկնածության առաջադրումը հավանության արժանացան ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի մեթոդական խորհրդի թարմացված կազմը և որպես ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի անդամ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ, դոցենտ Վ. Ավագյանի թեկնածությունը ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի

տնօրենի հաստատմանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Հ. Վանյան